ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴԵՎԱՆԻ
ՔԱՄԱԼՅԱՆ

Ծնվել է 1894թ., Իջևանի շրջանի Սևքար գյուղում: Սովորել է տեղի ծխական դպրոցում, հետո աշխատելու նպատակով մեկնել Բաքու: Մասնակցել է բանվորների ցույցերին և գործադուլներին: Ծառայել է ցարական բանակում (1914-1916), հիվանդության պատճառով զորացրվել և շարունակել է աշխատել Բաքվում, հետո՝ Թիֆլիսում:

1928թ. տեղափոխվել է Հայաստան և աշխատանքի անցել Լենինականում՝ որպես քաղաքային էլեկտրակայանի վարիչ, Լենհէկ-ի տնօրեն, Լենինականի քաղխորհրդի գործկոմի նախագահ (1930-1931):

1930-1935թթ. մասնակցել է Մոսկվայի Ստալինի անվան արդյունաբերության ակադեմիայի դասընթացներին: Այն ավարտելուց հետո նշանակվել է Քանաքեռհէկ-ի տնօրեն, <<Սևան-զանգշինի>> պետ, 1940թ.՝ ընտրվել Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:

1943թ. հունիսից մինչև նոյեմբեր աշխատել է <<Սևանշինի>> պետի տեղակալ, Քանաքեռհէկ-ի տնօրեն (1943-1948):

1948-ին մեկնել է Հայաստանից: